ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

7 հուլիսի 2014թ. ք. Երևան

**Եվրոպական իրավունքի առաջին ամառային դպրոց**

*2013թ.-ի հուլիսի 8-12-ը Աղվերանում կկայանա Եվրոպական իրավունքի առաջին ամառային դպրոցը:*

Մրցութային հիմունքներով ընտրված 27 երիտասարդ իրավաբաններ, Հայաստանի Հանրապետության ԲՈՒՀ-երի իրավաբանական ֆակուլտետների երրորդ և բարձր կուրսերի, ինչպես նաև մագիստրոսական ծրագրերով սովորող ուսանողներ հնարավորություն են ստացել Աղվերանում իրենց համար բացահայտելու եվրոպական իրավունքի բոլոր գաղտնիքները՝ Եվրոպական իրավունքի առաջին ամառային դպրոցի շրջանակներում:

Եվրոպական իրավունքի առաջին ամառային դպրոցի կազմակերպիչներն են Հայաստանի Իրավաբանական Հիմնադրամը, «Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիան», Միջազգային իրավական համագործակցության Գերմանական հիմնադրամը:

5-օրյա հագեցած ծրագրով ամառային դպրոցում դասախոսություններով հանդես կգան հայ և գերմանացի փորձագետներ, որոնց թվում եմ՝ ՀՀ Արտաքին գործերի փոխնախարար Զոհրաբ Մնացականյանը, ՀՀ դատախազության աշխատակազմի ղեկավար, դոցենտ Աշոտ Եսայանը, ՀԵԻԱ վարչության անդամ, փաստաբան Սյուզաննա Սողոմոնյանը, ՀՀ արդարադատության փոխնախարար Ռուբեն Մելիքյանը, ՀԵԻԱ վարչության անդամ, փաստաբան Մարատ Ատովմյանը, Գերմանիայի Կոբլենզի կիրառական գիտությունների համալսարանի Ռեմագեն քաղաքի Ռեյնահր կամպուսի դասախոս Հանս Վիլհելմ Շաումանը, Գերմանիայի Համմի Շրջանային բարձրագույն դատարանի դատավոր Նորբերտ Քոստերը, Գերմանիայի Ֆրեյբուրգ քաղաքի փաստաբան Դոկտոր Միքայել Քլեյն Կոսակը:

Բացի տեսական գիտելիքնեից, ամառային դպրոցի սաները ստանալու են նաև գործնական հմտություններ, որոնք կարող են կիրառել իրենց մասնագիտական գործունեության ընթացքում: Կազմակերպիչները հոգացել են նաև մասնակիցների հանգստի և ժամանցի կազմակերպման հարցերը:

**Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել Հայաստանի իրավաբանական հիմնադրամ: Հեռ.՝ 568788; ֆաքս՝ 580299; հասցե՝ Նալբանդյան 7, բն. 2; վեբ կայք՝ www. lawfoundation.am; էլ. փոստ՝ lawfound@gmail.com:**